Ծառայությունների Սակագներ

Տեղեկատվական ամփոփագիր Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար

Հրապարակման ամսաթիվ՝ հուլիս 2021

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Գործող պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայք՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC Բանկ Հայաստանը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

HSBC

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բոլոր տեսակի վճարները գանձվում են ՀՀ դրամով:

Սակագներով նախատեսված վճարները, որպես կանոն, վճարվում (գանձվում են այն բանկային հաշվից, որով կատարվում է համապատասխան գործարքը) գործառնությունը, ընդ որում՝ արտարժութային բանկային հաշվի դեպքում Բանկին իրավունք է վերապահվում գանձվելիք գումարի չափով արտարժույթը փոխանակել ՀՀ դրամի և գանձել: Արտարժույթի փոխանակման գործարքն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից գործարքին նախորդող/ ընթացիկ օրվա համար հրապարակված արտարժույթի միջին փոխարժեքով (կախված գործարքի/գործառնության ժամից), եթե այլ բան նախատեսված չէ սույն սակագներով:

Բանկն իր հայեցողությամբ կարող է կիրառել զեղչեր «Ծառայությունների Սակագներով» նախատեսված վճարների նկատմամբ կամ չկիրառել համապատասխան վճարները, եթե Հաճախորդը բավարարում է ստորև նշված չափանիշներից մեկին.

- Հաճախորդն ունի առնվազն 12 ամսվա բանկային հաշվի պատմություն Բանկում, և Հաճախորդի հաշիվների միջին մնացորդը կամ հաշիվների մուտքային շրջանառությունը վերջին երեք ամսվա ընթացքում գերազանցում է 100 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք գումարը՝ արտարժույթով:
- Հաճախորդն աշխատում է ընկերությունում, որի աշխատակիցների աշխատավարձային հաշիվները սպասարկվում են Բանկում, և այդ ընկերությունն ունի առնվազն 15 աշխատակից, որոնց միջին ամսական աշխատավարձը գերազանցում է 100 000 ՀՀ դրամը:

Հաշիվների բացում և սպասարկում[1]

Հաշվի բացման վճար

- Ընթացիկ հաշիվ
  - Ֆիզիկական անձինք 3 000 ՀՀ դրամ
  - Անհատ ձեռնարկատերեր 5 000 ՀՀ դրամ

    Հաշվի բացման պահին կիրառվում է նվազագույն տարեկան շրջանառության պահանջ, որին կարող եք ծանոթանալ սույն ամփոփագրում
- Խնայողական հաշիվ[2] 3000 ՀՀ դրամ
- Մինչև 18 տարեկան երեխայի հաշիվ Անվճար
- Ժամկետային ավանդային հաշիվ [3](ներառյալ կուտակային) Անվճար
- Էսքրո հաշիվ էսքրո գումարի 0.5%-ը (նվազագույնը 100 000 առավելագույնը 500 000)

Էսքրո հաշիվը բանկի կողմից տրամադրվող միանվագ ծառայություն է, որը նախատեսված է անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքների կողմերի միջև հաշվարկների ապահով իրականացման համար:

Լրացուցիչ հաշվի բացման վճար[4]

- Ընթացիկ հաշիվ 3 000 ՀՀ դրամ
- Խնայողական հաշիվ 3 000 ՀՀ դրամ

Նշում

Բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին ծանոթանալու համար խնդրում ենք այցելել մեր ինտերնետային կայքը՝ **www.hsbc.am**, մասնաճյուղերը/գրասենյակները կամ զանգահարել **+ 374 60 655 000** հեռախոսահամարով:

Սպասարկման ամսական վճար

- Ընթացիկ հաշիվ
  - Ֆիզիկական անձինք 300[5] ՀՀ դրամ
  - Անհատ ձեռնարկատերեր 500[5] ՀՀ դրամ
- Խնայողական հաշիվ[2] Անվճար

  Հաշվի սպասարկման վճար չի կիրառվում, եթե բավարարված է ամսական միջին մնացորդի պահանջը, որին կարող եք ծանոթանալ սույն ամփոփագրում:

Սպասարկման ամսական վճարը գանձվում է անկախ այն փաստից՝ հաճախորդը հաշիվն օգտագործում է, թե՝ոչ:

Սպասարկման ամսական վճարը չի կիրառվում, եթե ընթացիկ հաշիվն օգտագործվում է ժամկետային ավանդի մարման և/կամ ժամկետային ավանդի տոկոսների վճարման համար:

Նվազագույն մուտք

- Ընթացիկ հաշիվ Չի պահանջվում
- Խնայողական հաշիվ Չի պահանջվում
- Ժամկետային ավանդային հաշիվ (ներառյալ կուտակային) 100 000 ՀՀ դրամ
  500 ԱՄՆ դոլար
  500 եվրո

Կարևոր նշում

Բանկային հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ տոկոսներ չեն վճարվում:

1 Հաշիվների բացման և սպասարկման ընթացակարգին և այլ մանրամասներին ծանոթացեք «Ֆիզիկական անձանց բանկային հաշիվներ» տեղեկատվական ամփոփագրում:
2 Խնայողական հաշիվ կարող են բացել միայն ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդները:
3 Ժամկետային ավանդի հաշիվը բացվում է միայն խնայողական/ընթացիկ հաշվի առկայության դեպքում:
4 Ինտերնետային Բանկային ծառայության միջոցով լրացուցիչ հաշիվների բացումը կատարվում է անվճար:
5 Արտարժութային հաշվից գանձման դեպքում փոխանակումը իրականացվում է Բանկի կողմից սահմանված համապատասխան փոխարժեքով:

Միջին մնացորդի պահանջ

Ֆիզիկական անձինք

Միջին ամսական մնացորդի պահանջ

(կիրառվում է միայն խնայողական հաշվի համար)

Անկախ այն փաստից՝ հաճախորդը խնայողական հաշիվն օգտագործում է, թե՝ ոչ, յուրաքանչյուր ամսվա համար գանձվում է 2 000 ՀՀ դրամ (մինչև հաջորդող ամսվա վերջը), եթե հաճախորդի խնայողական հաշվի միջին ամսական մնացորդը տվյալ ամսվա համար փոքր է 100 000 ՀՀ դրամից կամ համարժեք այլ արժույթից:

Սույն գանձումը չի կիրառվում, եթե հաշիվը օգտագործվում է ժամկետային ավանդի մարման և/կամ ժամկետային ավանդի տոկոսների վճարման համար:

Անհատ ձեռնարկատերեր

Միջին եռամսյակային մնացորդի պահանջ

Եթե անհատ ձեռնարկատիրոջ՝ Բանկում սպասարկվող բոլոր հաշիվների միջին եռամսյակային մնացորդների հանրագումարը որևէ ամսվա առաջին աշխատանքային օրվա դրությամբ՝ նախորդող երեք ամիսների համար, փոքր է 5 000 000 ՀՀ դրամից (կամ արտարժութային հաշիվների դեպքում դրան համարժեք արտարժույթից), ապա յուրաքանչյուր ամիս գանձվում է լրացուցիչ սպասարկման վճար՝ 100 000 ՀՀ դրամի չափով:

Նվազագույն տարեկան շրջանառության պահանջ

Կիրառվում է միայն Անհատ Ձեռնարկատերերի հաշիվների Համար

Նվազագույն տարեկան շրջանառությունը՝ ըստ նախորդ ֆինանսական տարվա հարկային հաշվետվությունների և/կամ Բանկի կարծիքով այլ հավաստի տվյալների, պետք է կազմի 200 000 000 ՀՀ դրամ և ավելի:

Արտարժույթով հաշիվներ[1]

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում կարող եք բացել նաև արտարժույթով հաշիվներ: Այս հաշիվների բացման և սպասարկման համար կիրառվում են նախորդ էջերում նշված պայմանները և վճարները: Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի արտարժութային հաշվի միջոցով Դուք կարող եք հեշտությամբ կառավարել Ձեր միջոցները: Ցանկության դեպքում, Դուք կարող եք փոխարկել Ձեր գումարը ցանկացած այլ արժույթի, հաշվի արժույթի համար տվյալ պահին կիրառելի փոխարժեքով:

Կարևոր նշում.

ՀՀ դրամից բացի ցանկացած այլ արժույթով բանկային հաշիվն ենթադրում է արտարժութային ռիսկ կապված փոխարժեքի տատանումների հետ: Մասնավորապես, տվյալ արտարժույթի տատանումների դեպքում ՀՀ դրամով Ձեր գումարի համարժեքը կարող է փոփոխվել:

1 Արտարժույթի տեսակներին ծանոթացեք մեր կայքում՝ www.hsbc.am կամ «Ֆիզիկական անձանց բանկային հաշիվներ ամփոփագրում»:

Միջազգային VISA PLUS բանկոմատային քարտեր

- Քարտի թողարկում — Անվճար
- Քարտի սպասարկման ամսական վճար
  - Ֆիզիկական անձինք — Անվճար
  - Անհատ ձեռնարկատերերանձինք — 1 000 ՀՀ դրամ
- Հավելյալ քարտի թողարկում — 3 000 ՀՀ դրամ միանվագ վճար
- Հավելյալ քարտի սպասարկման վճար
  - Ֆիզիկական անձինք (տարեկան) — 6 000 ՀՀ դրամ
  - Անհատ ձեռնարկատերեր (ամսական) — 1 000 ՀՀ դրամ
- Քարտի վերաթողարկում — 3 000 ՀՀ դրամ[1] միանվագ վճար
- Փոխանցում Բանկում սպասարկվող հաշիվների միջև — Անվճար
- Բանկում սպասարկվող հաշիվների միջև փոխանցման օրական սահմանաչափ (ՀՀ դրամով) — Անվճար
  - Ֆիզիկական անձինք — 1 000 000 ՀՀ դրամ
  - Անհատ ձեռնարկատերեր — 3 000 000 ՀՀ դրամ
- Կանխիկի դուրսբերում Բանկին պատկանող բանկոմատներից — Անվճար
- Կանխիկի դուրսբերման օրական սահմանաչափ (ՀՀ դրամով)
  - Ֆիզիկական անձինք — 500 000 ՀՀ դրամ
  - Անհատ ձեռնարկատերեր — 500 000 ՀՀ դրամ
- Կանխիկի դուրսբերման վճար այլ բանկերի բանկոմատներից՝ յուրաքանչյուր գործարքի համար — 2 000 ՀՀ դրամ միանվագ վճար

1 Ինտերնետային/Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով քարտի վերաթողարկումը կատարվում է անվճար: Քարտը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

«Ծառայությունների սակագներ» տեղեկատվական ամփոփագրի ներդիր

Սույն ներդիրում նշված պայմանները ամբողջությամբ փոխարինում են «Ծառայությունների սակագներ» տեղեկատվական ամփոփագրի 8-րդ և 9-րդ էջերի «Փոխանցումներ/Բանկային մուրհակներ» բաժնի սակագները և նշումները և ուժի մեջ են մտնում ս.թ. ապրիլի 1-ից:

Փոխանցումներ / Բանկային մուրհակներ

Փոխանցումներ ՀՀ դրամով (ՀՀ տարածքում)[1]

- Հաշվից փոխանցումներ[2] — 300 ՀՀ դրամ[3*]
- Ստացված գումարների մուտքագրում հաշվին — Վճար չի կիրառվում
- Վճարման հանձնարարականի փոփոխում կամ չեղարկում — 5 000 ՀՀ դրամ
- Բանկային մուրհակի թողարկում — 6 000 ՀՀ դրամ

Փոխանցումներ ԱՄՆ դոլարով/ եվրոյով (ՀՀ տարածքում)

- Փոխանցված գումարների մուտքագրում հաշվին — Վճար չի կիրառվում
- Ելքային փոխանցումներ[4] — 5 000 ՀՀ դրամ
- Վճարման հանձնարարականի փոփոխում կամ չեղարկում — 5 000 ՀՀ դրամ

Փոխանցումներ ԱՄՆ դոլարով/ եվրոյով (ՀՀ տարածքից դուրս) մասնաճյուղում կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով

- Մասնաճյուղում հաշվից փոխանցումներ կանխիկի մուտքագրման դեպքում — 0.3% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)
- Մասնաճյուղում հաշվից անկանխիկ գումարների փոխանցումների/արտարժույթի փոխանակման դեպքում կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով — 0.1% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)
- Վճարման հանձնարարականի փոփոխում կամ չեղարկում — 20 000 ՀՀ դրամ

Փոխանցումներ ԱՄՆ դոլարից/եվրոյից բացի Բանկում սպասարկվող այլ արտարժույթներով մասնաճյուղում կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով

- Հաշվից փոխանցումներ կանխիկի մուտքագրման դեպքում — 3% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)
- Հաշվից անկանխիկ գումարների փոխանցումների/ արտարժույթի փոխանակման դեպքում — 0.3% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)
- Վճարման հանձնարարականի փոփոխում կամ չեղարկում — 20 000 ՀՀ դրամ

ՀՀ տարածքից դուրս փոխանցումներ Ինտերնետային բանկային ծառայության միջոցով

- Հաշվից փոխանցումներ բանկում սպասարկվող արժույթներով — 6 000 ՀՀ դրամ

Արտոնյալ սակագին ԱՄՆ դոլարով/եվրոյով կանխիկ միջոցների մուտքագրման և Բանկի կողմից սպասարկվող այլ արժույթներով անկանխիկ փոխանցումների/արտարժույթի փոխանակման դեպքում

Հաշվետեր հաճախորդները, կախված շրջանառության ծավալներից, կարող են օգտվել հետևյալ պայմանից.

Վերջին 3 ամիսների ընթացքում ելքային փոխանցումների միջին ամսական ծավալը արտահայտված ԱՄՆ դոլարով	Միջնորդավճար
50 000 և ավելի	0.1% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)

Շահառուի կողմից գումարն առանց պահումների ստանալու պարագայում փոխանցողի հաշվից գանձվող՝ միջնորդ/շահառու բանկ(եր)ի կողմից կիրառվող միջնորդավճարները

- Միջնորդ/շահառու բանկ(եր)ի գանձումները փոխանցողի հաշվից գանձման դեպքում կիրառվող միջնորդավճարներ, երբ շահառուն գումարը պետք է ստանա առանց պահումների.
- ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքում գործող ցանկացած բանկի ուղղված փոխանցումների համար 5 000 ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքից դուրս որևէ բանկի ուղղված փոխանցումների համար 10 000 ՀՀ դրամ
- Այլ արտարժույթով փոխանցումների համար 5 000 ՀՀ դրամ[5]

Այլ պայմաններ

- Բանկում առկա հաշիվների միջև փոխանցումներ Վճար չի կիրառվում
- Վճարման հանձնարարականի ուսումնասիրման վճար (գանձվում է անկախ ուսումնասիրման արդյունքներից) 20 000 ՀՀ դրամ
- Արտարժույթով փոխանցված գումարների մուտքագրում հաշվին, եթե փոխանցողը դեռ չի վճարել միջնորդավճարները 6 000 ՀՀ դրամ

Կարևոր նշումներ

- Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար:
- Միջնորդ/շահառու բանկ(եր)ի գանձումները կարող են կատարվել թե՛ փոխանցողի և թե՛ ստացողի միջոցների հաշվին՝ ըստ ցանկության համաձայնեցնելով Բանկի հետ:
- Բանկի պարտավորությունն է Հաճախորդին տրամադրել անդորրագիր յուրաքանչյուր մատուցված ծառայության կատարման վերաբերյալ:

---

[1] ՀՀ տարածքում ՀՀ դրամով փոխանցումների դեպքում, եթե փոխանցվող գումարը պարունակում է լումա, ապա այն կկլորացվի մինչև տասնորդական նիշը՝ ստանդարտ մոտեցմամբ:
[2] Եթե վճարման հանձնարարականը (առավելագույնը 25 միլիոն ՀՀ դրամ) Բանկ է ներկայացվում մինչև ժամը 14:00, ապա այն կատարվում է նույն օրը: Եթե այն ներկայացվում է 14:00-ից հետո, բայց ոչ ուշ, քան 15:00-ն և պահանջվում է կատարել նույն օրը, ապա կիրառվում է գանձում՝ 5 000 ՀՀ դրամի չափով: Ինտերնետային/Մոբայլ և Հեռախոսային Բանկային ծառայությունների միջոցով մինչև ժամը 15:00-ն ներկայացված վճարման հանձնարարականները կատարվում են նույն օրը առանց լրացուցիչ գանձման:
[3] Արտարժութային հաշվից գանձման դեպքում փոխանակումն իրականացվում է Բանկի կողմից սահմանված համապատասխան փոխարժեքով:
[4] Մինչև ժամը 14:00 ներկայացրած հանձնարարականները կկարտարվեն առավելագույնը հաջորդ գործառնական օրվա ընթացքում: Ժամը 14:00-ից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ գործառնական օրվա ընթացքում:
[5] Եթե փաստացի գանձված միջնորդավճարը ավել է, քան 20 000 ՀՀ դրամի համարժեքը, ապա վճարված և փաստացի գանձված միջնորդավճարների տարբերությունը ենթակա է գանձման փոխանցողի հաշվից:
*Ծառայությունն անվճար է, եթե վճարման հանձնարարականը ստացվել է Ինտերնետային/Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով:

Հաշիվների հեռակառավարում

Ինտերնետային և Մոբայլ բանկային ծառայություններ[1]

- Ինտերնետային բանկային ծառայության գրանցման վճար Չի կիրառվում
- Մոբայլ բանկային ծառայության գրանցման վճար[2] Չի կիրառվում
- Օգտագործման վճար Չի կիրառվում
- Օնլայն անվտանգության սարքի փոխարինում նորով
  - Սարքի անսարքության դեպքում Անվճար
  - Սարքի կորստի կամ գողության դեպքում (երբ այն ֆիզիկապես առկա չէ) 5 000 ՀՀ դրամ*
- SMS ծանուցումների ծառայություն (Ծառայությունից օգտվելու համար Ինտերնետային բանկային համակարգում գրանցումը պարտադիր է) Անվճար
- Բանկային ծառայությունների օգտագործում Համաձայն Ինտերնետային Բանկային Ծառայությունների Սակագների

Կարևոր նշում

Բանկը կարող է վաղաժամկետ դադարեցնել Հաճախորդի հետ կնքած Ինտերնետային/Մոբայլ բանկային ծառայությունից օգտվելու պայմանագիրը, եթե վերջին 12 ամիսների ընթացքում Հաճախորդի Ինտերնետային/Մոբայլ բանկային համակարգի օգտագործողի անունը ակտիվ չի եղել (Հաճախորդը համակարգ մուտք չի գործել):

Հեռախոսային բանկային ծառայություններ

- Հեռախոսային բանկային ծառայության գրանցման վճար 1 000 ՀՀ դրամ
- Օգտագործման վճար Չի կիրառվում
- Բանկային ծառայությունների օգտագործում Համաձայն Հեռախոսային Բանկային Ծառայությունների Սակագների

Կարևոր նշում

Բանկը կարող է վաղաժամկետ դադարեցնել Հաճախորդի հետ կնքած հեռախոսային բանկային ծառայությունից օգտվելու պայմանագիրը, եթե վերջին 12 ամիսների ընթացքում Հեռախոսային բանկային ծառայության միջոցով գործարք չի կատարվել:

1 Ինտերնետային/Մոբայլ բանկային ծառայությունները տրամադրվում են միայն Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին:
2 Մոբայլ բանկային ծառայությունը հասանելի է միայն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան Ինտերնետային բանկային
* Ներառյալ ԱԱՀ:

Բանկային հաշվի քաղվածքներ/ այլ փաստաթղթեր

Բանկային հաշվի քաղվածքների/ այլ փաստաթղթերի առաքում

Փոստով ՀՀ տարածքում

- Ամսական Անվճար

Փոստով ՀՀ տարածքից դուրս (միայն ստանդարտ փոստային ծառայության միջոցով)

- Ամսական (գանձվում է ամսական) 25 000 ՀՀ դրամ[1]*

Էլ-փոստով

- Ամսական, շաբաթական, օրական Անվճար

Ինտերնետով[2]

- Ամսական, շաբաթական, օրական Անվճար

Մասնաճյուղերից (առձեռն)

- Ամսական, շաբաթական, օրական Անվճար

Այլ ծառայություններ

- Լիազորագրի ձևակերպում 5 000 ՀՀ դրամ
- Հաշվեկշռի հաստատման/ բանկային հաշվի/վարկի վերաբերյալ տեղեկանքներ[3] 5 000 ՀՀ դրամ[4]*
- Հաշվեկշռի հաստատման / բանկային հաշվի/վարկի վերաբերյալ տեղեկանքներ Ինտերնետային/ Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով դիմելու դեպքում 1 000 ՀՀ դրամ[5]*
- Եկամտային հարկի փոխհատուցման նպատակով վարկային հաշվի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում Անվճար
- Բանկային հաշվի յուրաքանչյուր քաղվածքի կամ գործարքի վավերացման փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում (եթե այն ունի ավելի քան 6 ամսվա վաղեմություն) 3 000 ՀՀ դրամ[5]*
- Անհատ ձեռնարկատերերին աուդիտի նպատակներով հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում 10 000 ՀՀ դրամ*
- Բանկային հաշվի յուրաքանչյուր ամսվա պատմության վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (եթե այն ունի ավելի քան 6 ամսվա վաղեմություն) 3 000 ՀՀ դրամ[5]*

1 Արտարժութային հաշվից գանձման դեպքում փոխանակումը իրականացվում է Բանկի կողմից սահմանված համապատասխան փոխարժեքով:
2 Ինտերնետային բանկային ծառայությունից օգտվող հաճախորդների համար:
3 Հաշվեկշիռը հաստատող տեղեկանքը տրամադրվում է հայտը ստանալու օրվա և ժամի դրությամբ
4 10 000 ՀՀ դրամ վճար կկիրառվի, եթե հաճախորդը Բանկի հաշվետեր է ավելի պակաս քան 6 ամիս (ներառյալ Ինտերնետային/Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով դիմելու պարագայում):
5 Տեղեկանքը/փաստաթղթի կրկնօրինակը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից 3-5 աշխատանքային օրվա ընթացքում:
* Ներառյալ ԱԱՀ:

Այլ ծառայություններ

Կանխիկով գործարքներ/ գործառնություններ

- Կանխիկի մուտքագրում մասնաճյուղերում — Անվճար
- Կանխիկի մուտքագրում բանկոմատի միջոցով[1] — Անվճար
- Կանխիկ մուտքագրված գումարների կանխիկացում (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո)[2] — Անվճար
- Անկանխիկ գումարների կանխիկացում[3]
- ՀՀ դրամով — 0.2%, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլար/եվրո
- մինչև 1 000 միավոր — 2 000 ՀՀ դրամ
- 1000 միավոր և ավելի — 0.5%
- Այլ արժույթներով — 1.5%, նվազագույնը 2 000 ՀՀ դրամ
- Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի կողմից չթողարկված քարտերից կանխիկացում Բանկի POS տերմինալներով — 1%
- Արտարժույթով հնամաշ/ շրջանառությունից դուրս եկած թղթադրամների փոխանակում, եթե պահպանված են անհրաժեշտ պաշտպանական հատկանիշները և մասերը[4] — 5%

Անհատական պահատեղեր[5]

- Անհատական պահատեղերը տրամադրվում են ամսական կամ տարեկան կտրվածքով միայն Բանկի STATUS հաճախորդներին, ովքեր հանդիսանում են հաշվետեր ավելի քան 12 ամիս:

Վճար (մինչև մեկ տարի ժամկետով տրամադրման համար)

- Էքստրա մեծ — 200 000 ՀՀ դրամ*
- Մեծ — 120 000 ՀՀ դրամ*
- Միջին — 90 000 ՀՀ դրամ*
- Փոքր — 50 000 ՀՀ դրամ*

Վճար (մինչև մեկ ամիս ժամկետով տրամադրման համար)

- Էքստրա մեծ — 50 000 ՀՀ դրամ*
- Մեծ, միջին — 30 000 ՀՀ դրամ*
- Փոքր — 15 000 ՀՀ դրամ*

Այլ վճարներ

- Անհատական պահատեղ շաբաթական երկու անգամից ավելի այցելության դեպքում յուրաքանչյուր հավելյալ այցելության համար սահմանված վճար — 10 000 ՀՀ դրամ*
- Առանց անձնական բանալու առկայության անհատական պահատեղի բացման վճար — 5 000 ՀՀ դրամ*
- Կորած բանալին վերականգնելու վճար — 15 000 ՀՀ դրամ*

1 Կանխիկի մուտքագրման առավելագույն օրական սահմանաչափը՝ 1 000 000 ՀՀ դրամ բանկոմատային քարտին
2 Այլ արժույթների համար տես անկանխիկ գումարների կանխիկացման սակագները:
3 Փոխանակման, հաճախորդի այլ հաշիվներից փոխանցման կամ Բանկի կողմից տրամադրված վարկային գումարների (բացառությամբ կրեդիտ քարտերի) դեպքում չի կիրառվում:
4 Ծառայությունը տրամադրվում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի հաճախորդներին: Ոչ հաշվետեր հաճախորդներին ծառայությունը տրամադրվում է միայն արտարժույթի փոխանակման գործարք իրականացնելիս (արտարժույթի փոխանակման օրական առավելագույն սահմանաչափ՝ 400 000 ՀՀ դրամ):
5 Հաճախորդը միաժամանակ կարող է ունենալ նշված պահատեղերից միայն կամ 1 էքստրա մեծ, կամ 1 մեծ, կամ 2 միջին, կամ 2 փոքր, կամ 1 միջին և 1 փոքր չափի պահատեղ:
* Ներառյալ ԱԱՀ:

Չեկեր

Չեկեր/Չեկային գրքույկ[1]

- Չեկային գրքույկի տրամադրում — Անվճար
- Վճարման արգելանքի կիրառում — 3 000 ՀՀ դրամ
- Վճարման արգելանքի չեղարկում — Անվճար
- **Անբավարար մնացորդի պատճառով չեկի վերադարձ — 5 000 ՀՀ դրամ**

Այլ չեկեր

- Չեկի ընդունում — 50 000 ՀՀ դրամ [2]
- Առանց վճարման վերադարձված չեկի դիմաց գանձվում է միանվագ վճար՝ 10 000 ՀՀ դրամ, գումարած միջնորդ/ վերադարձնող բանկերի գանձումները

Կարևոր նշում

Այլ բանկերի չեկերը ընդունվում են միայն հաշվետեր հաճախորդներից՝ նվազագույնը 6 (բանկային չեկերի համար) և 12 (անձնական և կորպորատիվ չեկերի համար) ամիսների հաշվի բավարար պատմության առկայության պարագայում:

1 Չեկային գրքույկներ տրամադրվում են ընթացիկ հաշիվ ունեցող հաճախորդներին միայն ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:
2 Սակագինն իր մեջ ներառում է փոստային ծառայության միջոցով չեկը թողարկող բանկ ուղարկելու հետ կապված ծախսերը:

«Ծառայությունների սակագներ» տեղեկատվական ամփոփագրի ներդիր

Սույն ներդիրում նշված պայմանները ամբողջությամբ փոխարինում են «Ծառայությունների սակագներ» տեղեկատվական ամփոփագրի 12-րդ էջի «Այլ ծառայություններ» բաժնի սակագները

Այլ ծառայություններ

Կանխիկով գործարքներ/գործառնություններ

• Կանխիկի մուտքագրում մասնաճյուղերում	Վճար չի կիրառվում
• Կանխիկի մուտքագրում բանկոմատի միջոցով[1]	Վճար չի կիրառվում
• Կանխիկ մուտքագրված գումարների կանխիկացում (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո)[2]	Վճար չի կիրառվում
• Անկանխիկ գումարների կանխիկացում[3]	
• ՀՀ դրամով	0.2%, նվազագույն՝ 1000 ՀՀ դրամ
• ԱՄՆ դոլարով/եվրոյով	2%
• Այլ արժույթներով կանխիկացում	3%
• Այլ Բանկերի կողմից թողարկված քարտերից կանխիկացում Բանկի POS տերմինալներով	2%
• Արտարժույթով հնամաշ/շրջանառությունից դուրս եկած թղթադրամների փոխանակում, եթե պահպանված են անհրաժեշտ պաշտպանական հատկանիշները և մասերը[4]	5%

Անհատական պահատեղեր[5]

Անհատական պահատեղերը տրամադրվում են ամսական կամ տարեկան կտրվածքով միայն Էյչ-Էս-Բի-Սի STATUS հաճախորդներին, ովքեր հանդիսանում են հաշվետեր ավելի քանի 12 ամիս:

Վճար (մինչև մեկ տարի ժամկետով տրամադրման համար)

• Էքստրա մեծ	200 000 ՀՀ դրամ*
• Մեծ	120 000 ՀՀ դրամ*
• Միջին	90 000 ՀՀ դրամ*
• Փոքր	50 000 ՀՀ դրամ*

Վճար (մինչև մեկ ամիս ժամկետով տրամադրման համար)

• Էքստրա մեծ	50 000 ՀՀ դրամ*
• Մեծ, միջին	30 000 ՀՀ դրամ*
• Փոքր	15 000 ՀՀ դրամ*

Այլ վճարներ

Անհատական պահատեղ շաբաթական երկու անգամից ավելի այցելության դեպքում յուրաքանչյուր հավելյալ այցելության համար սահմանված վճար	10 000 ՀՀ դրամ*
Առանց անձնական բանալու առկայության անհատական պահատեղի բացման վճար	5 000 ՀՀ դրամ*
Կորած բանալին վերականգնելու վճար	15 000 ՀՀ դրամ*

---

[1] Կանխիկի մուտքագրման առավելագույն օրական սահմանաչափը՝ 1,000,000 ՀՀ դրամ բանկոմատային քարտին կցված յուրաքանչյուր հաշվին:

[2] Այլ արժույթների համար տես անկանխիկ գումարների կանխիկացման սակագները:

[3] Փոխանակման, հաճախորդի այլ հաշիվներից փոխանցման կամ Բանկի կողմից տրամադրված վարկային գումարների (բացառությամբ կրեդիտ քարտերի) դեպքում չի կիրառվում:

[4] Ծառայությունը տրամադրվում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի հաճախորդներին: Ոչ հաշվետեր հաճախորդներին ծառայությունը տրամադրվում է միայն արտարժույթի փոխանակման գործարք իրականացնելիս (արտարժույթի փոխանակման օրական առավելագույն սահմանաչափ՝ 400 000 ՀՀ դրամ):

[5] Հաճախորդը միաժամանակ կարող է ունենալ նշված պահատեղերից միայն կամ 1 էքստրա մեծ, կամ 1 մեծ, կամ 2 միջին, կամ 2 փոքր, կամ 1 միջին և 1 փոքր չափի պահատեղ:

* Ներառյալ ԱԱՀ:

Նշումներ

- Սույն ամփոփագրում ներկայացված են Էյչ-Էս-ԲիՍի Բանկ Հայաստանի կողմից տրամադրվող ընդհանուր ծառայությունների սակագները: HSBC STATUS և HSBC PLUS հաճախորդներին տրամադրվող հավելյալ ծառայություններին և արտոնյալ սակագներին ծանոթացեք մեր ինտերնետային կայքում՝ www.hsbc.am կամ այդ ծառայությունների տեղեկատվական ամփոփագրերում:
- Այս տեղեկատվական ամփոփագրում ներկայացված բանկային ծառայությունների վերաբերյալ հավելյալ տեղեկատվությունը հասանելի է մեր ինտերնետային կայքում՝ www.hsbc.am կամ «Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի համար» տեղեկատվական ամփոփագրում:
- «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող ծառայությունների բոլոր պայմանները և սակագները կարող են փոփոխվել, ինչի մասին հաճախորդները կտեղեկացվեն նախապես: Գործող պայմանների և սակագների, ինչպես նաև դրանց փոփոխությունների վերաբերյալ ամբողջական և մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել բանկի ցանկացած մասնաճյուղ, այցելել մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am կամ զանգահարել +374 60 655 000 հեռախոսահամարով:

Թողարկված է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամ, որն աշխարհի ֆինանսական և բանկային ծառայություններ տրամադրող խոշորագույն կազմակերպություններից մեկն է: Էյչ-Էս-Բի-Սի Խմբի միջազգային ցանցը ներառում է 64 երկիր և տարածաշրջան:

www.hsbc.am
+374 60 655 000

Իրավաբանորեն հաստատված է
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66 Գրանցման համար 67

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2020:
Բոլոր իրավունքները պահպանված են:
Պայմաններն ուժի մեջ են սկսած 2020թ. հունվարի 15-ից: